

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

3103 «ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեսավորումը ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների							
		Քննութ	Ստուգարք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս			
					Ընդամենը	Այդ թվում		3-րդ կիս. 17 շաբ	4-րդ կիս. 19 շաբ	5-րդ կիս. 15 շաբ	6-րդ կիս. 17 շաբ	7-րդ կիս. 15 շաբ	8-րդ կիս. 13 շաբ		
Տեսակ. ուսուցում	Լաբոր. և գործն. աշխ	Սեմինար պարապմունք													
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ														
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3,4տ		72	72		36	36						
1.2	Տնտեսագիտության հիմունքներ		4տ		54	54			54						
1.3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		6տ		54	54					54				
1.4	Իրավունքի հիմունքներ		6տ		36	36					36				
1.5	Պատմություն		3,4տ		54	54		34	20						
1.6	Ռուսաց լեզու		3,4տ		72	72		38	34						
1.7	Օտար լեզու		3,4տ		72	72		36	36						
1.8	Ֆիզիկական կուլտուրա		3-7, 8տ		192		192	34	38	30	34	30	26		
	ԸՆԴԱՄԵՆԸ				606	414	192	178	218	30	124	30	26		
2.	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ														
2.1	Էկոլոգիայի հիմունքներ		4տ		36	36			36						
2.2	Համակարգչային օպերատորության հիմունքներ		3տ		54	20	34	54							
2.3	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		3տ		18	18		18							
	ԸՆԴԱՄԵՆԸ				108	74	34	72	36						
3.	ԱՈՒՆՑԱԿԱՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ														
3.1	Հաղորդակցություն		4տ		56	40	16		56						
3.2	Անվտանգություն և առաջին բուժօգնություն		3տ		36	20	16	36							
	ԸՆԴԱՄԵՆԸ				92	60	32	36	56						
4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ														
4.1	Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների անատոմիական կառուցվածքի առանձնահատկությունները		3տ		72	54	18	72							
4.2	Գյուղատնտեսական կենդանիների տարբեր բջիջների և հյուսվածքների կառուցվածքի առանձնահատկությունները		4տ		60	60			60						
4.3	Հողի մշակման համակարգեր		3տ		50	34	16	50							
4.4	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում		5տ		54	27	27			54					
4.5	Վիճակագրություն և տնտեսական գործունեության վերլուծություն		5տ		54	36	18			54					
4.6	Ցանքաշրջանառությունների համակարգը և նրանց առանձնահատկությունները		4տ		50	34	16		50						
4.7	Անասնաբուժության հիմունքներ		5տ		120	80	40			120					
4.8	Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների բուժման և վարակի տարածման կանխարգելում		5տ		72	36	36			72					
4.9	Անասնաբուժական սամիտարիայի և զոոհիգենայի հիմունքները		6տ		72	40	32				72				
4.10	Կերային լրացակերերը որպես կենդանիների մթերատվության բարձրագույն գործոն		6տ		70	60	10				70				
4.11	Գյուղատնտեսական կենդանիների կերակրում և խնամք		4տ		68	34	34		68						
4.12	Անասնապահական մթերքների արտադրության տեխնոլոգիա		3տ		68	34	34	68							
4.13	Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում		6տ		68	34	34				68				

4.14	Անասնաբուժական ծագում ունեցող մթերքների պահպանում և վերամշակում	7տ	50	34	16					50	
4.15	Կերերի պահածոյացում	3տ	70	48	22		70				
4.16	Արտադրական պրոցեսների մեքենայացումը անասնապահական ֆերմաներում	5տ	60	40	20				60		
4.17	Գյուղատնտեսական արտադրության կառավարում	6տ	72	36	36					72	
4.18	Աշխատանքի անվտանգության հիմունքները	3տ	30	18	12		30				
4.19	Երկրագործության ընդհանուր հիմունքներ	3տ	36	18	18		36				
4.20	Բուսաբուժական մթերքների արտադրության տեխնոլոգիա	6տ	72	32	40					72	
4.21	Դաշտային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաները	6տ	72	36	36					72	
4.22	Կերային մշակաբույսերի արտադրանքի արտադրության տեխնոլոգիա	6տ	36	16	20					36	
4.23	Մարքետինգ և գյուղատնտեսական արտադրանքի փաթեթավորում	4տ	50	32	18			50			
4.24	Գյուղատնտեսական վիճակագրություն և տնտեսական գործունեության վերլուծություն	7տ	54	36	18						54
	ԸՆԴԱՄԵՆԸ		1480	909	571		326	228	360	462	104
5.	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱԼ										
5.1	Գյուղատնտեսական կենդանիների, թռչունների և այլ կենդանատեսակների ցեղերի կենսաբանական առանձնահարկություններ, հմտություններ, զնահատում	4տ	72	52	20			72			
5.2	Գյուղատնտեսական կենդանիների աճը և զարգացումը: Արտակազմվածք, համակազմվածք: Հաճախման մեթոդները	4տ	72	52	20			72			
5.3	Գյուղատնտեսական կենդանիների պահվածքի տեխնոլոգիաները և խնամքը	7տ	72	56	16					72	
5.4	Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների մթերատվության վրա ազդող գործոնները	8տ	72	60	12						72
5.6	Գյուղատնտեսական կենդանիների զուգավորումը և արհեստական սերմնավորում	8տ	120	60	60						120
5.6	Գյուղատնտեսական կենդանիների բուժման հիմունքները	7տ	72	60	12						72
5.7	Անասնաբուժական սկզբնական հաշվառում	7տ	72	36	36						72
5.8	Կերերի դասկարգումը, քիմիական կազմը և սննդարարությունը	5տ	72	42	30				72		
5.9	Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների կերակրման նորմաները և կերաբաժինները կազմելու հմտությունները	5տ	72	42	30				72		
5.10	Կաթնատու կովերի կերակրումը	8տ	70	60	10						70
5.11	Հորթերի կերակրումը կաթնային շրջանում	8տ	60	40	20						60
5.12	Տավարի բուծումը	7տ	62	42	20						62
5.13	Խոզերի կերակրումը	7տ	60	45	15						60
5.14	Թռչունների կերակրումը	7տ	50	42	8						50
5.15	Անասնաբուժության մեջ կիրառվող ոչ բարդ տեխնոլոգիաներում օգտագործվող գործիքների և սարքավորումների շահագործման հմտություններ	8տ	72	36	36						72
	ԸՆԴԱՄԵՆԸ		1070	725	345		144	144		388	394
	ԸՆԴԱՄԵՆԸ										
6.	ԸՆՏՐՈՎԻ		48							18	30
	ՊԱՂՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԵՐ		52								18
	ԸՆԴԱՄԵՆԸ						612	684	540	612	540
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ		300								
	Շաբաթվա ժամերի քանակը						36	36	36	36	36

IV. ՆԱԽԱՄԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՉՐԱԺԵՇՏ ԿԱՔԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱՔՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՌՉԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԿԱՔԻՆԵՏՆԵՐ
1	Հոգեբանություն				
2	Խորհրդատվական ծառայությունների մատուցման ձևերն ու մեթոդները			1	հայոց լեզվի և խոսքի մշակույթի
3	Կենդանիներին լուսանկարելու հմտություններ			2	օտար լեզվի,
4	Գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի կազմակերպիչ, բոնիտոր			3	մաթեմատիկայի,
				4	իրավունքի հիմունքների
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	5	մասնավոր անասնաբուծության, գյուղատնտեսական կենդանիների և թռչունների ցեղերի ուսումնասիրության
1	Ուսումնական	4	4	6	գյուղատնտեսական կենդանիների կերակրման
2	Ուսումնական	5	3	7	անասնաբուծության մեջ օգտագործվող գործիքների և սարքավորումների
3	Ուսումնական	6	5	8	համակարգչային
4	Ուսումնական	7	2	9	աշխատանքի անվտանգության
5	Ուսումնական	8	2		
6	Մասնագիտական	8	3		ԼԱՔՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
7	Նախաավարտական	8	4		կերերի քիմիական կազմի որոշման,
	ԸՆԴԱՄԵՆԸ		23	1	անասնաբուծական մթերքների և հումքի,
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ				2	ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
				3	մարզադահլիճ մարզահրապարակ
ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Մասնավոր անասնաբուծություն					
Անասնապահական մթերքների արտադրության տեխնոլոգիաներ					
Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում և կառավարում					

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին:
Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել եմթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

ՄՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԱՀՀ 4-08-001

ՄՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 56 ժամ

Տեսական պարապմունք՝ 40 ժամ

Գործնական աշխատանք՝ 16 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է նրանց համար, ովքեր կարիք ունեն զարգացնելու և ամրապնդելու հաղորդակցության իրենց ունակությունները: Մոդուլը կարելի է սովորել ոչ միայն մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այլև առանձին, քանի որ այն պարունակում է նաև ընդհանուր կրթության և անձի զարգացման համար կարևոր տարրեր: Սա նշանակում է, որ դասավանդողները պիտի խրախուսեն տարբեր մոտեցումներ բացահայտելու հնարավորությունները, ինչպես օրինակ՝ դերային խաղեր, տեսանյութեր, մամուլի ուսումնասիրություն և այլն: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կզարգացնի հաղորդակցության կարևոր ունակություններ, ձեռք կբերի ինքնավստահություն, որպեսզի կարողանա արդյունավետ և ակտիվ կերպով հաղորդակցվել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև՝ անձնական կյանքում:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝

Նախնական հմտություններ կամ կարողություններ չեն պահանջվում:

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Ուսանողը կարողանում է՝

1. սահմանել ուսումնառության անձնական նպատակները,
2. բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին,
3. նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ,
4. մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ,
5. կատարել փաստաթղթավորում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Յուրաքանչյուր արդյունքի համար բավարար առաջադիմության սահմանումը վկայում է ընդհանուր գնահատման համար անհրաժեշտ անցումային միավորի ձեռք բերման մասին: Այդուհանդերձ, մոդուլի ընթացքում ուսանողի կողմից կատարվող վարժությունների քանակը չպետք է սահմանափակվի գնահատման համար նախատեսված վարժություններով: Ուսանողին Հաղորդակցության մոդուլից անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք հանդաված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում:

ԱՐԴՅՈՒՆՔ 1 ՍԱՀՄԱՆԵԼ ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա) ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,
- բ) ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,
- գ) ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները

ԳԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին առաջադրանք կտրվի ինքնուրույն մշակել ու կազմել հաղորդակցման ձևերն ու մեթոդները, բացահայտել դրանց մեխանիզմներն ու հնարավորությունները, դերային խաղերի, տեսանյութերի և օժանդակ այլ պարագաների միջոցով:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ներկայացված հաղորդակցման մեթոդները համապատասխանում են մշակված առաջադրանքին, ճիշտ են շարադրված հաղորդակցման ձևերն ու մեթոդները, դերային խաղերը, տեսանյութերը, շարադրանքը համոզեցուցիչ է և գրագետ ձևակերպված: Ինքնավստահությունը նկատելի է, կկարողանա արդյունավետ և ակտիվ կերպով հաղորդակցվել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, տեղեկատվական նյութեր, քարտեզներ, ատլասներ, սոցիոլոգիական թեստեր, նկարներ, տեսահոլովակներ և այլ պարագաներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 8 ժամ

Գործնական աշխատանք` 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2 ԲԱՆԱՎՈՐ և ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՐՁ ԹԵՄԱՆԵՐԻ ԵՎ ՏԵՔՍՏԵՐԻ ՄԱՍԻՆ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա) օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,
- բ) հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,
- գ) տեղեկատվության առանձնացում/խմբավորումը նպատակային է կատարում,
- դ) հաղորդումը իրականացնում է` հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի ըստ համապատասխան կառուցվածքի օգտագործել բանավոր և գրավոր խոսքը, ապահովել պարզ տեղեկատվություն, թեմաների և տեքստեր խմբավորումը կատարել նպատակային:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե առաջադրանքը ամբողջությամբ ճիշտ և անթերի կատարվի:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, պլակատներ, բուկլետներ և օժանդակ այլ միջոցներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 8 ժամ

Գործնական աշխատանք` 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3 ՆԱԽԱՁԵՌՆԵԼ, ՊԱՅՊԱՆԵԼ, ԵԶՐԱՓԱԿԵԼ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա) ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են.
 - պարզաբանումներ ստանալու ձգտումը,
 - գրառումներ կատարելը,

- ամփոփելը,
- բ) ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,
- գ) ցուցաբերում է համոզելու հատկություն,
- դ) կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի հմտությունների օգտագործմամբ կատարել պարզաբանումներ, գրառումներ, գաղափարների, տեսակետների ու կարծիքների արտահայտում և պաշտպանել, ամփոփել ու եզրափակել:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի եթե առաջադրանքն ամբողջությամբ ճիշտ է կատարված և անթերի է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է մասնագիտական գրականություն, լրացվող փաստաթղթերի ձևեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

- Տեսական պարապմունք՝ 8 ժամ
- Գործնական պարապմունք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4 ՄԵԿՆԱԲԱՆԵԼ ՍԽԵՄԱՆԵՐ, ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ, ՂԻԱԳՐԱՍՆԵՐ, ՔԱՐՏԵԶՆԵՐ ԵՎ ՆԿԱՐՆԵՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա) ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,
- բ) մեկնաբանման համար օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի մեկնաբանել սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը, գտնել դրանց միջև տարբերությունները և մեկնաբանել: Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ուսանողը առաջադրանքը ճիշտ և անթերի է կատարում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ, չափումներ իրականացնող գործիքներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

- Տեսական պարապմունք 8 ժամ
- Գործնական աշխատանք 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5 ԿԱՏԱՐԵԼ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա) ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ նրանց նշանակության,
- բ) ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղը և դերը,
- գ) ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարավի տարբերակել փաստաթղթերը, նախանշել դրանց օգտագործման տեղը և դերը, կատարել տեղեկատվությունների փաստաթղթավորում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե առաջադրանքն ամբողջությամբ ճիշտ է կատարում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՆԵՍՈՒՐՄՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ու տեղեկատու գրականություն, անհրաժեշտ փաստաթղթեր, հաշվառման և գրանցման մատյաններ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք 8

Գործնական աշխատանք 3

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԱԱՕ 4- 08- 001

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 36 ժամ

Տեսական պարապմունք՝ 20 ժամ

Գործնական պարապմունք՝ 16 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը մշակվել է արտադրական ձեռնարկություններում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողներին գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման հմտություններ տալու համար: Այն անհրաժեշտ է արտադրական ձեռնարկության բոլոր մակարդակների աշխատողներին:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական գիտելիքներ պետք չեն:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա՝

1. աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,
2. անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում,
3. արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները,
4. առաջին օգնության կազմակերպումը և անհրաժեշտ միջոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1 ԻՄԱՆԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա/ Գիտի աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը և օրենքները:
- բ/ Գիտի ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը:
- գ/ Գիտի աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը:
- դ/ Գիտի աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:

ե/ Գիտի արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը:

զ/ Գիտի արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարավի որոշակի սկզբունքներով կանոնակարգել ձեռնարկության աշխատանքի պաշտպանության իրավական և ներքին նորմատիվային կազմակերպչական ակտերը և օրենքները: Կատարել աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերի, նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվության, վերահսկողության, դժբախտ դեպքերի և պատահարների փաստաթղթավորման, հաշվառման կարգի ձևերն ու մեթոդները: Տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ:

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Ուսումնառության համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, օրենքներ, իրավական ու նորմատիվային փաստաթղթեր, պլակատներ, բուկլետներ, նկարներ, դիագրամաներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե առաջադրանքն ամբողջությամբ ճիշտ և անթերի է:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք 5 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2 ԻՄԱՆԱԼ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա/ Գիտի տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների, փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները:

բ/ Գիտի էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը:

գ/ Գիտի հրդեհանվտանգության կանոնները և պաշտպանությունը:

դ/ Գիտի ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարավի ըստ որոշակի նշանակության կազմել ձեռնարկության տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների, փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջների առանձնահատկությունները: Կազմել էլեկտրաանվտանգության և պաշտպանության հրդեհանվտանգության կանոնները և պաշտպանությունը ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք:

Ուսումնառության համարանհրաժեշտ է ունենալ տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների, փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները բնութագրող մասնագիտական համապատասխան գրականություն: Իրավական ու նորմատիվային փաստաթղթեր, պլակատներ, բուկլետներ, նկարներ, դիագրամաներ: Էլեկտրաանվտանգության կանոնների և պաշտպանության, հրդեհանվտանգության կանոնների,

ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները բնութագրող փաստաթղթեր:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե առաջադրանքն ամբողջությամբ ճիշտ և անթերի է:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք 5 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ԵՎ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա/Պատկերացնում է արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները:

բ/ Գիտի արտադրական միկրոկլիմայի վերաբերյալ նորմատիվային պահանջները:

գ/ Գիտի արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները:

դ/ Գիտի արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի ըստ որոշակի ուղղվածության կազմել արտադրական սանիտարիայի և հիգիենայի, արտադրական միկրոկլիմայի նորմատիվային պահանջները, արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները, միավոր տարածքի համար նախատեսվող արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Ուսումնառության համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական՝ արտադրական սանիտարիայի և հիգիենայի, միկրոկլիմայի նորմատիվային պահանջների, արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջների և իրավական ու նորմատիվային փաստաթղթերի վերաբերյալ գրականություն, պլակատներ, բուկլետներ, նկարներ, դիագրամաներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե առաջադրանքն ամբողջությամբ ճիշտ և անթերի է:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք 5 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4 ԱՈԱԶԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա/Գիտի ճիշտ կատարել արհեստական շնչառություն,

բ/ Գիտի ճիշտ կատարել սրտի աշխատանքի վերականգնում,

գ/ Գիտի դադարեցնել արյան հոսքը և դնել վիրակապ,

դ/ Գիտի կոտրվածքների վիրակապման կարգը,

ե/ ճիշտ է կատարում առաջին օգնությունն այրվածքների դեպքում,

զ/ ճիշտ է կատարում առաջին օգնությունն էլեկտրահարման դեպքում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի կատարել արհեստական շնչառության, սրտի աշխատանքի վերականգնման, արյան հոսքի դադարեցման վիրակապի /այդ թվում կոտրվածքների դեպքում/դրման, այրվածքների դեպքում առաջին օգնության աշխատանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք:

Ուսումնառության համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, պլակատներ, բուկլետներ, նկարներ, մուլյաժներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե առաջադրանքն ամբողջությամբ ճիշտ և անթերի է:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք 5 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱՐԱՏՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ԱԲԾ 4-08-001

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 72 ժամ

Տեսական պարապմունք` 54 ժամ

Գործնական աշխատանք` 18 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Ուսանողը ուսումնառության ընթացքում պետք է գաղափար կազմի գյուղատնտեսական տարբեր կենդանատեսակների կմախքի կառուցվածքի, ներքին սեկրեցիայի ապարատի, բազմացման օրգանների և զգայարանների գործունեությանը:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՋՆԵՐԸ`

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական գիտելիքներ անհրաժեշտ չեն:

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է տիրապետի`

1. Գյուղատնտեսական տարբեր տեսակի կենդանիների կմախքի կառուցվածքին,
2. Կենդանիների ներքին սեկրեցիայի ապարատի գործունեությանը և առանձնահատկություններին,
3. Կենդանիների զգայարանների և բազմացման օրգանների ֆունկցիոնալ գործունեության առանձնահատկություններին:

ԳՆԱՐԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

1. Բնութագրել խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, թռչունների անատոմիական կառուցվածքը և կմախքի առանձնահատկությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա/ խոշոր եղջերավոր կենդանիների անատոմիական կառուցվածքի նկարագիրը կատարված է ճիշտ,

բ/ մանր եղջերավոր կենդանիների անատոմիական կառուցվածքի նկարագիրը կատարված է ճիշտ,

բ/ թռչունների անատոմիական կառուցվածքի նկարագիրը կատարված է ճիշտ,

ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվի առաջադրանք բնորոշել գյուղատնտեսական կենդանիների և թռչունների անատոմիական կառուցվածքը/ կմախքի նկարագրությունը ըստ կենդանատեսակների/, դրանց

առանձնահատկությունները, Մուլյաժների վրա կատարել ցուցադրություն կենդանիների անատոմիական կառուցվածքի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե առաջադրանքն ամբողջովին ճիշտ և անթերի կատարի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Ուսումնառության համար անհրաժեշտ են մասնագիտական գրականություն, մուլյաժներ, պլակատներ, էքսիզներ, կենդանիների նկարներ:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական պարապմունք 18 ժամ

Գործնական աշխատանք 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2.

Բնութագրել կենդանիների ներքին սեկրեցիայի ապարատի գործունեությունը և առանձնահատկությունները,

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա/խոշոր եղջերավոր կենդանիների ներքին սեկրեցիայի ապարատի գործունեության առանձնահատկությունները բացահայտված են ամբողջովին և ճիշտ,

բ/ մանր եղջերավոր կենդանիների ներքին սեկրեցիայի ապարատի գործունեության առանձնահատկությունները բացահայտված են ամբողջովին և ճիշտ,

գ/ թռչունների ներքին սեկրեցիայի ապարատի գործունեության առանձնահատկությունները բացահայտված են ամբողջովին և ճիշտ,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվի առաջադրանք բնորոշել գյուղատնտեսական կենդանիների և թռչունների ներքին սեկրեցիայի ապարատի գործունեությունը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե առաջադրանքն ամբողջովին ճիշտ և անթերի կատարի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Ուսումնառության համար անհրաժեշտ են մասնագիտական գրականություն, մուլյաժներ, պլակատներ, էքսիզներ, կենդանիների նկարներ:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական պարապմունք` 18 ժամ

Գործնական աշխատանք` 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3.

Կենդանիների զգայարանների և բազմացման օրգանների ֆունկցիոնալ գործունեության առանձնահատկություններին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա/ գիտի գյուղատնտեսական կենդանիների ներքին օրգանների գործունեության առանձնահատկությունները:

բ/ գիտի գյուղատնտեսական կենդանիների զգայարանների նշանակության և գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ լիարժեք գիտելիքներ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվի առաջադրանք բնորոշել գյուղատնտեսական կենդանիների և ներքին օրգանների և զգայարանների դերը դրանց առանձնահատկությունները: Մուլյաժների վրա կատարել ցուցադրություն կենդանիների ներքին օրգանների տեղադրման վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե առաջադրանքն ամբողջովին ճիշտ և անթերի կատարի:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Ուսումնառության համար անհրաժեշտ են մասնագիտական գրականություն, մուլյաժներ, պլակատներ, էսքիզներ, կենդանիների նկարներ:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական պարապմունք 18 ժամ,

Գործնական աշխատանք 6 ժամ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԲԶՋԻՋՆԵՐԻ ԵՎ ԶՅՈՒՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԱԲԾ 4-08-002

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 60 ժամ

Դասընթացի մատուցման ձևը՝

Տեսական պարապմունք՝ 60 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Կենդանու ֆիզիոլոգիայի ուսումնասիրությունը ունի բացառիկ նշանակություն: Այն հնարավորություն է տալիս ուսումնասիրել օրգանիզմում ընթացող կենսական պրոցեսները և անհատական զարգացման առանձնահատկությունները:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել՝ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» մոդուլը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլն յուրացնելուց հետո ուսանողը պետք է տիրապետի՝

1. Բջիջների կառուցվածքի և հյուսվածքների տեսակներին,
2. Օրգանիզմի և արտաքին միջավայրի միջև գործող կապի առանձնահատկություններին:

ԳՆԱԶԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Բջիջների կառուցվածքը և հյուսվածքների տեսակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա/ բջիջների կառուցվածքի բազմացման և նյութափոխանակության իմացություն,

բ/ հյուսվածքների տիպերի և կառուցվածքի իմացություն:

ԳՆԱԶԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի առաջադրանք նկարագրելու բջիջների կառուցվածքը /սխեմատիկ պատկերմամբ/, դրանց բազմացումը և նյութափոխանակության առանձնահատկությունները, նկարագրվի հյուսվածքների տիպերը և կառուցվածքը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե առաջադրանքն ամբողջովին ճիշտ և անթերի կատարի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք:

Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, պլակատներ, մանրադիտակներ, անհրաժեշտ այլ պարագաներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 30 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Օրգանիզմի և արտաքին միջավայրի միջև գործող կապի առանձնահատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա/ օրգանիզմի անհատական զարգացման առանձնահատկությունների տիրապետում,

բ/ օրգանիզմի ֆիզիոլոգիական պրոցեսների և միջավայրի միջև գործող միասնական կապի պատկերում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի առաջադրանք բնորոշել օրգանիզմի անհատական զարգացման առանձնահատկությունները և դրանց օրինաչափությունները, օրգանիզմի կենսաբանա-ֆիզիոլոգիական գործընթացները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե օրգանիզմի զարգացման բոլոր առանձնահատկությունները և օրինաչափությունները ճիշտ են ձևակերպված:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք: Դասավանդման համար

անհրաժեշտ է մասնագիտական և տեղեկատու գրականություն, պլակատներ, չափագիական գործիքներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 30 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀՈՂԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ԱԲԾ 4-08-003

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 50 ժամ

Դասընթացի մատուցման ձևը՝ Տեսական պարապմունք՝ 34 ժամ

Գործնական աշխատանք՝ 16 ժամ

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է Ամասնաբույծ որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է տալ գիտելիքներ հողի մշակման նպատակների և խնդիրների, հողի մշակման հիմնական և մակերեսային համակարգերի, նրանց կիրառման եղանակների և ձևերի մասին, կապված բույսերի աճի և զարգացման համար համապատասխան պահանջների և հողային պայմանների ստեղծման հետ:

Մուտքային մակարդակը՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական գիտելիքներ անհրաժեշտ չեն:

Արդյունքները՝

Մոդուլի յուրացումից հետո ուսանողը պետք է՝

- 1. կարողանա ճիշտ շարադրել հողի մշակության անհրաժեշտ խնդիրները, նրանց իրականացման տեխնոլոգիական գործընթացները,

2. կարողանա ներկայացնել հողի հիմնական և մակերեսային մշակումների եղանակները և ձևերը, հողային գործոնների նկատմամբ մշակաբույսերի պահանջների առանձնահատկությունները,
3. կարողանա ճիշտ բնութագրել հողի մշակման համակարգերը, նրա բաղկացուցիչ տարրերը,
4. կարողանա ճիշտ շարադրել ցելերի տեսակները, մշակման առանձնահատկությունները:

Գնահատման կարգը`

Մոդուլի գնահատման ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է ճիշտ շարադրել հողի մշակությանը անհրաժեշտ խնդիրները, նրանց իրականացման տեխնոլոգիական գործընթացները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- կարողանում է հիմնավորել հողի մշակման անհրաժեշտությունը և նրա հետ կապված խնդիրները,
- կարողանում է շարադրել հողի մշակման տեխնոլոգիական գործընթացները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Սովորողին կտրվեն որոշակի հարցադրումներ` կապված հողի մշակման խնդիրների և տեխնոլոգիական գործընթացների հետ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Դասախոսությունների միջոցով ուսանողին տրվել է գիտելիքներ հողի մշակման նպատակի, անհրաժեշտության և խնդիրների մասին: Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը փորձարարական աշխատանքներ է կատարում հողի կառուցվածքի փոփոխությունների վերաբերյալ, ինչպես նաև բույսերի աճի համար հողում ստեղծված պայմանների վերաբերյալ:

ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	8 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանում է ներկայացնել հողի հիմնական և մակերեսային մշակումների եղանակները և ձևերը, հողային գործոնների նկատմամբ մշակաբույսերի պահանջների առանձնահատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- տիրապետում է հողի հիմնական և մակերեսային մշակման եղանակներին,
- կարողանում է հիմնավորել գործոնների նկատմամբ մշակաբույսերի պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կտրվեն հարցեր, հողի հիմնական և մակերեսային մշակումների տեխնոլոգիական գործընթացների տարբերության վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին պետք է տրվի գիտելիքներ այն մասին, թե որ դեպքերում պետք է կատարել հողի հիմնական մշակում, և որ դեպքերում մակերեսային մշակումներ` կապված դաշտը զբաղեցրած մշակաբույսերի, ցելերի առանձնահատկությունների և հողի ամրության հետ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	8 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանում է ճիշտ բնութագրել հողի մշակման համակարգերը, նրա բաղկացուցիչ տարրերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ճիշտ է շարադրում հողի մշակման համակարգերը տարբեր բնակլիմայական գոտիներում:
- կարողանում է ներկայացնել հողի նախացանքային, ցանքային և հետցանքային գործընթացները,
- ճիշտ է բնութագրում բերքահավաքին հաջորդող գործընթացները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողներին կտրվի առաջադրանք հողի նախացանքային, հետցանքային և բերքահավաքից հետո կատարվող գործընթացների, նպատակների և խնդիրների վերաբերյալ, կապված տարբեր մշակաբույսերի առանձնահատկությունների հետ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Դասախոսությունների միջոցով ուսանողին տրվելու են գիտելիքներ, թե տարբեր մշակաբույսեր և ցելեր ինչ ազդեցություն են ունենում հողի ֆիզիկական հատկությունների վրա, հողի միավոր ծավալում, կարծր ֆազի և ընդհանուր ծակոտկենության համամասնության, հողի ամրության, ինչպես նաև հողի խոնավության և սննդատարերի վրա: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը փորձարարական աշխատանքով պետք է պարզի հողի վարելաշերտի կառուցվածքի վիճակը և միավոր ծավալում կարծր, հեղուկ և գազային ֆազերի համամասնությունը:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	8 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանում է ճիշտ շարադրել ցելերի տեսակների մշակման առանձնահատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ճիշտ է բնութագրում ցելերի էությունը և տեսակները:
- կարողանում է ճիշտ ներկայացնել ցելերի կիրառման պայմանները:
- տիրապետում է ցելերի կատարման տեխնոլոգիաներին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կտրվեն հարցեր, պարզելու, թե որ դաշտում, որ մշակաբույսերից հետո և ինչու են թողնում ցելի տակ: Կտրվեն նաև հարցեր ցելերի դասակարգման, նրանց կիրառման ժամկետների ու տեսակների կիրառման անհրաժեշտության մասին: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի

սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Դասախոսությունների միջոցով ուսանողին տրվելու են գիտելիքներ` ցելերի, նրանց դասակարգման, հողի բերրիության վրա ունեցած ազդեցության, ցելից հետո մշակվող մշակաբույսերի առանձնահատկությունների, հողում խոնավության կուտակման և պահպանման, կատարած ծախսումների փոխհատուցման հարցերը:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	10 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՅԱԳՈՐԾՈՒՄ»

Մոդուլի դասիչը` **ԱԲԾ 4-08-004**

Մոդուլի տևողությունը` **54 ժամ**

Դասընթացի մատուցման ձևը`	Տեսական պարապմունք`	27 ժամ
	Գործնական աշխատանք`	27 ժամ

Մոդուլի նպատակը`

Այս մոդուլը նախատեսված «Անասնաբույծ» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ ավտոմոբիլների, տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների, անասնապահական տեղակայանքների և սարքավորումների տեսակների, կառուցվածքի, շահագործման և տեխնիկական սպասարկումների լիարժեք կոմպլեկտավորման, աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների ձևավորման, շահագործման, ինչպես նաև պահպանում իրականացնելու կարողություններ:

Մուտքային պահանջները`

Այս մոդուլն ուսումնասիրելու նախնական գիտելիքներ անհրաժեշտ չեն:

Արդյունքները`

Այս մոդուլն յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. կարողանա ներկայացնել մեքենաների համակարգը, և դասակարգել բուսաբուծական և անասնապահական մեքենաների արտադրության տեխնոլոգիական գործընթացների համալիր մեքենայացման և ավտոմատացման միջոցները,
2. կարողանա հստակ շարադրել գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների կառուցվածքը, տեխնիկական և շահագործական ցուցանիշները,
3. կարողանա կազմել մեքենայական ագրեգատներ, որոշել նրանց կազմն, քանակը, վառելանյութերի և քսայուղերի տեսակը և քանակը,
4. կարողանա դասակարգել տեխնիկական սպասարկումների տեսակները և որոշել նրանց քանակը,
5. կարողանա ճիշտ շարադրել մեքենաների պահպանման եղանակները և գործընթացները,
6. կարողանա շարադրել տրակտորային ագրեգատների և ավտոմոբիլների վարման անվտանգության կանոնները:

Գնահատման կարգը`

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է ներկայացնել մեքենաների համակարգը, և դասակարգել բուսաբուծական և անասնապահական մթերքների արտադրության տեխնոլոգիական գործընթացների համալիր մեքենայացման և ավտոմատացման միջոցները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Կարողանում է դասակարգել բուսաբուծական և անասնապահական մթերքների արտադրության գործընթացները,

ճիշտ է ընտրում տնտեսությանն անհրաժեշտ տեխնիկական միջոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն մի շարք առաջադրանքներ որոշակի մթերքների արտադրության գործընթացների ցանկը կազմելու և համապատասխան մեքենաներ ու գործիքներ ընտրելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ մեքենաների համակարգի, մթերքների արտադրության համալիր մեքենայացման և ավտոմատացման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր մեքենաների և գործիքների դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԸ՝

- Տեսական պարապմունք՝ 4 ժամ
- Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանում է հստակ շարադրել գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների կառուցվածքը, տեխնիկական և շահագործական ցուցանիշները,

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ճիշտ է շարադրում մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,
- ընտրում կամ որոշում է տեխնիկական միջոցների շահագործական ցուցանիշները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողներին կտրվեն մի շարք առաջադրանքներ առանձին մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը շարադրելու, տեխնիկական և շահագործական ցուցանիշները ընտրելու կամ հաշվելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր մեքենաների և գործիքների դիտակտիկ նյութեր, տեսական գրականություն:

ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱՔԱՆԱԿԸ՝

- Տեսական պարապմունք՝ 5 ժամ
- Գործնական աշխատանք՝ 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կազմում է մեքենայական ագրեգատներ, որոշել նրանց կազմն, քանակը, վառելանյութերի և քսայուղերի տեսակը և քանակը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

-Ըստ սահմանված ագրոժամկետների և աշխատանքի ծավալի որոշում է մեքենայական ագրեգատների, վառելանյութերի և քսայուղերի քանակը,

-կազմում է տրակտորների և ավտոմոբիլների ծանրաբեռնվածության գրաֆիկներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողներին կտրվեն մի շարք առաջադրանքներ առանձին մշակաբույսերի մշակման գործընթացների համար որոշելու մեքենատրակտորային ագրեգատների, վառելանյութերի և քսայուղերի քանակը, կազմելու տրակտորների և ավտոմոբիլների ծանրաբեռնվածության գրաֆիկներ: Աղյուսքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների, գործնական և կուրսային աշխատանքի կատարման միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր մեքենաների և գործիքների դիտակտիվ նյութեր, չափորոշիչներ և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 4 ժամ

Գործնական աշխատանք` 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Դասակարգում է տեխնիկական սպասարկումների տեսակները և որոշել նրանց քանակը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

-ըստ գործող չափորոշիչների որոշում է տեխնիկական սպասարկումների և նորոգումների տեսակները, քանակը և կատարման ժամկետները,

-կազմում է տրակտորների, ավտոմոբիլների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների աշխատանքի պլան գրաֆիկը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողներին կտրվեն մի շարք առաջադրանքներ առանձին տրակտորների, ավտոմոբիլների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների համար որոշել տեխսպասարկումների տեսակը, քանակը, աշխատանքի ծավալը, ժամկետները և կազմել պլան գրաֆիկ: Աղյուսքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ տեխնիկական միջոցների սպասարկման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 4 ժամ

Գործնական աշխատանք` 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կարողանում է ճիշտ շարադրել մեքենաների պահպանման եղանակները և գործընթացները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ճիշտ է շարադրում տեխնիկայի պահպանման դրույթներն և հրահանգները,
- ճիշտ է շարադրում բաց, փակ և կոմբինացված պահպանման եղանակների առանձնահատկությունները,
- կարողանում է պահպանման ժամանակ ընտրել խնամքի և տեխնիկական սպասարկման միջոցներ և կատարել տեխնիկական սպասարկում,
- կարողանում է պահպանման ժամանակ ձեռնարկել հակահրդեհային միջոցառումներ և ընտրել համապատասխան միջոցներ:

ԳԱՆՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողներին կտրվեն մի շարք առաջադրանքներ տեխնիկական միջոցների պահպանման և պահպանման ժամանակ տեխնիկական միջոցների սպասարկման եղանակների, միջոցների և հակահրդեհային միջոցառումների վերաբերյալ գիտելիքներ ստուգելու նպատակով: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի բոլոր պահանջների կատարման վրա:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ տեխնիկական միջոցների պահպանման, պահպանման ժամանակ տեխնիկական սպասարկումների ձևերի, միջոցների և հակահրդեհային միջոցառումների մասին: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, ուսումնական գրականություն և դիտակտիվ նյութեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱՔԱՆԱԿԸ`

- Տեսական պարապմունք` 6 ժամ
- Գործնական աշխատանք` 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կարողանում է շարադրել տրակտորային ագրեգատների և ավտոմոբիլների վարման անվտանգության կանոնները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ճիշտ է շարադրում տրակտորների և ավտոմեքենաների վրա աշխատելու ժամանակ կիրառվող անվտանգության կանոնները,
- կարողանում հաղորդել տրակտորիստին և ավտովարորդին անհրաժեշտ հոգեֆիզիկական և հոգեկան պահանջվող հատկություններ:

ԳԱՆՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողներին կտրվեն մի շարք առաջադրանքներ տրակտորների և ավտոմեքենաների վրա աշխատելու ժամանակ կիրառվող անվտանգության տեխնիկայի կանոններին, տրակտորիստին և ավտովարորդին անհրաժեշտ հոգեֆիզիկական և հոգեկան հատկություններին վերաբերվող գիտելիքներ ստուգելու նպատակով, ինչպես նաև ուսանողին կառաջարկվեն երթուճակ տրակտորի (ավտոմեքենայի) վրա կատարել մի շարք վարժություններ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի բոլոր պահանջների կատարման վրա: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են, ուսումնական գրականություն, անիվավոր և թրթուրավոր տրակտորներ, ավտոմեքենաներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մոդուլի դասիչը՝ ԱԲԾ 4-08-005

Մոդուլի տևողությունը՝ 54 ժամ

Դասընթացի մատուցման ձևը՝ Տեսական պարապմունք՝ 36 ժամ

Գործնական աշխատանք՝ 18 ժամ

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ գյուղատնտեսության վիճակագրության հիմնական հասկացությունների, մեթոդների բացարձակ և հարաբերական միջին մեծությունների, վիճակագրական բաշխումների, ընտրանքային դիտարկման, սոցիալ-տնտեսական երևույթների փոխադարձ կապերի, դինամիկ շարքերի, ինդեքսների և դրանց օգտագործման, վիճակագրական ցուցանիշների խմբավորման մեթոդների և տարբեր գործոնների ազդեցության պատճառահետևանքային կապերի վերաբերյալ:

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Տնտեսագիտության հիմունքներ» և «Համակարգչային օպերատորության հիմունքներ» առարկաները:

Արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ճիշտ շարադրել վիճակագրության հիմնական հասկացությունները, կազմի վիճակագրական աղյուսակներ, հաշվարկել միջին և հարաբերական մեծություններ, ինդեքսներ, կազմել դինամիկ շարքեր,
2. կարողանա կատարել տնտեսության հիմնական ցուցանիշների՝ ցանքատարածությունների և բերքատվության, անասնազխաքանակի և մթերատվության վրա ազդող գործոնների վերլուծություն,
3. կարողանա հավաքել տեղեկատու նյութեր, կազմել ժամանակային շարքեր,
4. կարողանա կատարել արտադրության վրա կատարված ծախսերի վրա ազդող գործոնների վերլուծություն,
5. կարողանա կատարել շահույթի և շահութաբերության վրա ազդող գործոնների վերլուծություն:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողական յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է ճիշտ շարադրել վիճակագրական հիմնական հասկացությունները, կազմել աղյուսակներ, հաշվարկել միջին և հարաբերական մեծություններ, դինամիկ շարքեր:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

Կատարում է վիճակագրական դիտարկումներ, լրացնել վիճակագրական փաստաթղթեր, ճիշտ է հաշվարկում հարաբերական և բացարձակ միջին մեծությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն տեսական և գործնական առաջադրանքներ և գյուղացիական տնտեսության արտադրա-տնտեսական ցուցանիշների վերաբերյալ տվյալներ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշի կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան բանվորական տետրեր:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի վրա անհրաժեշտ գիտելիքներ, վիճակագրական հասկացությունների և հիմնական ցուցանիշների հաշվարկման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու է ուսումնական գրականություն, խնդիրների ժողովածու, վիճակագրական աղյուսակներ, գրաֆիկներ, գյուղացիական տնտեսության վերաբերյալ կոնկրետ տվյալներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	6 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կատարում է գյուղատնտեսության հիմնական ցուցանիշների` բերքատվության, անասնազխաքանակի, մթերատվության, կերերի վրա ազդող գործոնների վիճակագրական վերլուծություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ`

Կարողանում է կատարել տնտեսության օրինակով վիճակագրական վերլուծություն` բացարձակ և հարաբերական վիճակագրական մեծությունների, միջին մեծությունների, վարիացիայի ցուցանիշների, ինդեքսների, դինամիկ շարքերի օգնությամբ բուսաբուծության ճյուղի և անասնաբուծության ճյուղի ցուցանիշների ուղղությամբ (ցանքատարածությունների, բերքի, բերքատվության, համախառն բերքի, հոտի վերարտադրության, մթերատվության, զխաքանակի շարժի փոփոխությունները, դինամիկան):

